

4817


houslip li C

1848

BRITISH MUSEUM

1848

55



165-212

August 1

PROBATION

DEPT. OF CORRECTIONS

2004

4817

ԵՂՈԹՒԷՄԵՏՈՅՑ

ՍՐԻԵՉԵՆՆԵՑ ԵՒ ԳԼԵՑ

ՀԱՒԱՔԵԱԼ ՅԱՂՈԹՈՒՅ ՎԱՐԴԱՆԱՅ
ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԱԿՍ ՀԵՐՄԵՌԱՆԻ
ՀՈԴԵՍԻՐԱՅ ՈՐՔ ԱՆՁԱՄԻ ԿԱՄ
ՄՏՕՔ ՆԵՐԿԱՅԱՆԱՆ Ի ՏՆՕՐԻՆԱԿԱՆ
ՏԵՂԻՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ



ՏՊԵԱԼ ՎԵՐՍԻՆ


Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԵՂԻՄ




Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ԱՌԱՔԵԼՈՅ

= 1848 =

5171



Մացուք ՚ի յարկս նորա. երկիրպագ ցուք
 ՚ի տեղւոջ՝ ուր կացեալ են սաք նորա .
 Ս-շ-ւ- . Գ-Լ- ՃԼԵ . Է/Բ . 6 .



4817-4




36209-60

— 322 —



Քրիստոս ինչպէս ՚ի տաղանի գաւ թի .
 տալովն հոգիս ընդ հիւշարիս . և իսկ
 հանդիպի սարեղի . Հարսի .



ԱՂՕԹԻՔ

ԱՌԱՂԻ ՍՐԲՈՅ ԺՆՆԴԵԱՆ
ՏԵՂԻՈՅՆ ԲՐԻՍՏՈՍԻ



ՈՐԴԻ՛ ան թագաւոր բարձրեալ՝
 օր խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ . և իջեր
 յարգանդ ամենամարուր սուրբ կուսի՛ն
 մարիամու . և ծնար 'ի նմանէ՛ անտուածգ
 բոլորից մարդ կատարեալ 'ի բէթլէհէմ
 'ի սբ յայրին , զի նորոգեացես զհնութիւն
 նախաստեղծ մարդոյն , վասնորոյ երկրպա
 գելով սուրբ տեղւոյդ ծննդեան՝ փառա
 ւորեմ զանձառելի խոնարհութիւնդ ընդ
 հրէշտակաց . օրհնեմ զանքննելի տնօրէ
 նութիւնդ ընդ հովուաց . բարեբանեմ
 զանչափ մարդասիրութի՛դ ընդ մոգուցն .
 և աղաչեմ զքեզ փրկիչ իմ Յիսուս՝ ըն
 կով զերկրպագութիս իմ 'ի հաճոյս քոյ .
 որպէս ընկալար 'ի հովուացն և 'ի մոգուցն .
 և շնորհեա՛ զքաւութիւն յանցանաց իմոց՝
 բարեխօսութբ մօր քո և կուսի և ամենայն
 սբց . և արժանաւորեա՛ զիս 'ի միւսանգամ
 գալստեանդ փառաւորել զքեզ ընդ հօր
 և ընդ սուրբ հոգւոյդ այժմ և միշտ
 և յաւիտեանս , ամէն .

ԱՂՕԹՎ


Առաջի սուրբ Մարտի քրիստոսի :

Ո՛ր էիր յառաջ քան զյաւիտեանս
բանդ իմ՝ փառաւորեալ ընդ հօր և սբ
հոգւոյն ՚ի դասուց հրանիւթիցն . և հանգ
չիս յաթուս քրօքեականս . և դթացեալ
՚ի գործս ձեռաց քոց , խնարհեցար ՚ի
յերկնից վասն փրկութեան մերոյ . զի բարձ
րացուցես զընութիւնս մեր . իջեանեցար
՚ի մտեր անբանից , զի զհաւասարեալս և
զմմանեալս նոցին՝ յառաջին փառս վերա
ծիցես . խանձարբարատ պատեցար , զի
զմեր կապանս մեղաց խզեալ պատառեա
ցես , որով և զհպարտացեալն ՚ի վերայ
ստեղծուածոցդ կործանեցեր . հաց անմու
հութեան պարգևեցար յն , զի զսովեալն
կերակրեսցես . վասնորոյ գոհաբանեմ ըզ
տերութիւնդ՝ որ այց արարեր պատկերիդ
կորուսելոյ . և հայցեմ ՚ի քեհն փրկիչ իմ ,
ընկալ զերկրպագութիս իմ՝ բարեխօսութե
անարատ ծնողի քո սուրբ իմածնի և իմ
տրոց . և շնորհեա՛ զայցելութիւն հոգւոյ
խնոյ ՚ի յօր երեւման փառաց քոց , լսել
զձայնդ հայրական . և փառաւորել զա
մենասուրբ երրորդութիւնն աթմ՝ և միշտ
և յաւիտեանս , ամէն :

ԱՂՕԹԻՔ

Ի սուրբ յարութեան գուան :

Եւ զԵԱ, առաջի սուրբ գրան Երկնա
 տիպ տաճարի քոյ Երկրորդանել անօրի
 նական սուրբ տեղեացդ և խնդրել զԹո
 դութիւն յանցանաց խնոց, մի Երթեր զիս
 յողորմութ, քումմէ, զի գին եմ սուրբ
 արեանգ, գթա՛ և յիս՛ որպէս գթացար
 յաջակողմեան աւազակն, և բացեր նմա
 զգուան գրախտին կենաց, բայց և ինձ մե
 ղաւորիս զգուան ողորմութ քո՛ բարե
 խօսութք մօր քո և կուսի, զի արժանի
 եղէց մատաւորել զքեզ ընդ հօր և ընդ
 սբ հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս
 ամէն :




ԱՂՕԹԻՔ

Առաջի սուրբ բանտին քրիստոսի :

Ո՛ր ճառարդայթդ անշիջանելի և
 ընդ իմանալի կեանքդ իմ յիսուս, որ
 ընճանեցար ՚ի սարսափելի գիշերի մեծի
 ուրբաթու, և կապեցար նախատանօք՝ լու
 ծիցդ կապելոց, ոչ դարձուցեր զանաե

տանելի զերեսդ 'ի թքանելոյ՝ բարձո՞ղգ
 անիծից . գանեցար աստակօք 'ի հրեից՝
 փրկիչդ կորուսելոց . ձաղեցար 'ի զինուռ
 թաց՝ տէրդ հրեշտակաց . գատեցար 'ի պիւ
 զատոսէ՝ արքայդ հրեղինաց . մտեր 'ի բանտ
 ստեղծո՞ղգ համայնից . անարգական մահու
 գատապարտեցար՝ կեանքդ աշխարհի, զի
 զպարտաւորեալս մեղօք աղստեսցես .
 Անս որոյ աղաչեմ զքեզ բարեխօսութե
 մօր քո և ամ սրբոց . հան զիս 'ի բանտէ
 մեղաց . լուք ձայնի պաղատանաց իմոց . և
 յիշեա՛ զիս յորժամ գայցես արքայութե
 քով՝ զի դու ես տէր ամենայնի . և քեզ
 փառք յաւիտեանս յաւիտենից ,
 ամէն .




ԱՊՕԹԻՔ

Առաջի վշով պսակեալ սուրբ տեղոյն քրիստոսի .

ԼԻԿԱՅՆԱՄԻՏ և բազումնորմ՝ Տէր-
 որ կարգեցեր գլուխ ամենայն կենդանեաց
 զմարդն , զոր և պսակեցեր լուսեղէն փա
 ոօք . Իսկ 'ի ստունդանել նորա անձային
 պատուիրանացդ՝ արտաքսեցեր 'ի փառա
 կենցաղ գրախտէն յերկիրս մահաբեր .
 աալով նմա վճիռ բուսուցանել զփուշ

խոցութից . այլ ամենախնամ տէրդ՝ ոչ անտես արարեր զպատկերդ տէրունական . այլ ելեր 'ի խնդիր յերկիրս անիծաբեր . և փոխանակ արքայական պսակին՝ 'ի սուրբ գլուխ . քո զփշեղէն պսակ ընկալար . զի զանէծան առաջին յօրհնութի փոխեսցես . Արդ՝ աղաչեմ զքեզ յիսուս , հան յինէն զփուշ մեղացն . և բժշկեա՛ գհոգի իմ՝ 'ի խոցմանէ վիրաց , զի մի դատապարտեցայց ընդ չար մշակացն . բարեխօսութե՛ սուրբ անձաճնի և ամենայն սրբոց քոց արա՛ արժանի անվախճան կենացդ , զի ընդ հրեշտակացն զօրհնութի և զփառս վերառաքեցից քեզ՝ և հօր ամենակալի և հոգւոյդ սբյ ճշմարտի , այժմ՝ և միշտ և յաւիտեանս ամէն :




ԱՊՕԹԻՔ

Առաջի սուրբ հանդերձ բաժանման տեղւոյն գրիտոսի :

Տէ՛ր Բոլորից , անդ ամենայն արարածոց , որ յոչնչէ ստեղծեր զերկինս և զերկիր , և զոր 'ի նոսա . և զարդարեցեր զամենայն գեղաշուք վայելչութե՛ . և զառաջնաստեղծ մարդն զգեցուցեր հրաշա

գեղ լուսով : Իսկ որդիքն անօրինաց
 դահրդ մերկացուցին . և զհանգերձդ բա-
 ժանեալ 'ի միջի իւրեանց 'ի մերաւ անկար-
 պատմութեանիդ միճակ արկին : Արդ՝ ա-
 զայլեմ գրեզ փրկիցդ աշխարհի մերկեալ
 յինէն զքուրձ մեղաց . և զգեցո՛ հոգւոյս
 զլոյս փառաց . զի մի՛ յանձառ ջորհացդ
 զրկեալ գտաց , այլ գասիլ ընդ սուրբս
 քո 'ի կեանս անխախձան , և քեզ փառք
 յամենայնի՛ այժմ՝ և միշտ և յաւիտեանս ,
 ամէն .




ԵՂՕԹԻՔ

Առջի տարածման սուրբ տեղոյն քրիստոսի :

Օրեջ տէր անձ իմ օրհնեմ և փա-
 աւորեմ . և զքէն տէր գոհանամ , որ ոչ
 անտես արարեր զգործս ձեռաց քոց . այլ
 միշտ հոգացար վասն մերոյ փրկութեան .
 իջեր 'ի հօրէ և մարմնացար 'ի սր կուսէն .
 յանձն առեր զչարչարանս . բարձեր զհայտ
 մահու 'ի յուս քո . ելեր 'ի գողգոթայ
 որպէս զհասհանն առաջին՝ տարածեցեր
 զանարատ և զամենազօր բազուկս քո՝ 'ի
 վերայ փրկաւիտ սուրբ խաչին՝ և պատա-
 ըագեցար գանձդ անարատ՝ առ 'ի հաշ-

տուժիւնն հօր և 'ի բաւութի մեղուցեղոս,
 Արդ՝ ընկալ զխոստովանութիս իմ հան
 գերձ երկրպագութբ . քեզ 'ի հաճութի,
 սրբեան զիս 'ի մեղաց վասն հեղման պատ
 ուական սբ արեան քո և բարեխօսութբ
 սուրբ անձամբնիդ և ամենայն սրբոց քոց .
 զի դու ես տէր անձ իմ . և 'ի քեզ անկաց
 յարդանդէ սուրբ աւաղանին . և ոչ գոյ
 ինձ ալ իմ բաց 'ի քէն , և քեզ փառս
 մատուցանեմ հանդերձ հարբդ և սուրբ
 հոգւովդ այժմ և միշտ և յաւիտեանս .
 ամէն .




ԱՂՕԹԻՔ

Առաջի սուրբ գողգոթայի .

ՈՒՄՆԱՆՈՐ անմահ տէր բոլորից՝ յոյժ
 մեղաւորաց և փրկութիւն համայնից , որ
 յանձն առեր կամաւ զչարչարանս , և բե
 շեռեցար 'ի խաչախայտին հեղով զարիւն
 քո սուրբ 'ի փրկութիւն աշխարհի .
 Արդ՝ անկեալ առաջի ամենազօր տէրու
 թեանդ՝ երկրպագանեմ սուրբ տեղոյդ
 խաչելութե , և աղաչեմ բարեխօսութբ
 մօր քո սուրբ կուսի և ամենայն սրբոց
 անբեան ինձ՝ որպէս ներշնչեր ջարջարողացն

զքեղ. գ.թան և յիս որպէս գ.թացար յա
 ջակողմեան աւազակն, ընդորում արժա
 նացո՛ և զիս ՚ի դրախտն կենաց՝ քաւելով
 զմեղս իմ. ընր ձայնի աղաչանաց խնոց և
 պահեան զիս ընդ հովանեաւ անձային կեն
 սատու նշանի քո. զի արժանի եղէց գո
 հու.թեամբ փառաւորել զանոխակալ
 մարդասիրութիդ ընդ հօր և ընդ սուրբ
 հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս.
 ամէն.




ԱՊՕԹԻՔ

Առաջի սուրբ պատանաւոր շնորհաբեր

ԱՆՊԱՐԱԳՐԵԼԻ Բանդ հօր և պար
 դեատու առատ ողորմութեան, որ խո
 նարհեցար յանձառ փառացդ. մեռար
 մարմնով անմահդ անձ. զի զմահացեալս
 կեցուցես. պատեցար սուրբ կտաւօք ՚ի
 յովսէփայ արդարոյ, զի զմերկութիւնն
 ագամայ ծածկեցես. և զառ ՚ի մեղաց
 կաշկանդեալս արձակեցես. և այժմ ա
 զաչեմ զքեղ բարեխօսութեամբ անարատ
 ծնողի քո ծածկեան՝ զաղտեղեալ հոգի իմ
 անձառելի շնորհօք քո. մարբեան ՚ի մեղաց
 մարդասէր գ.թութեամբ քով. և պահեան

զիս անձային աջովդ զի արժանի եղէց փռ
աւարել զքեզ ընդ հօր ամենակալի և
ընդ սուրբ հոգւոյն ճշմարտի այժմ և
միշտ և յաւիտեանս ,
ամէն ,




ԱՊՕԹԻՔ

Առաջի նժընկալ գերեզմանին քրիստոսի :

ԳՈՀԱՆԱՄ զքէն թագաւոր առ
մահ , որ կամաւ յանձն առեր զչարչարանս
խաչի և մահու , իջեր 'ի գերեզման թա
ղելով 'ի սիրտ երկրի . աւերեցեր զդժոխս .
լուծեր զերկունս մահու . կապեցեր զգե
րողն . ազատեցեր զգերեալսն . զմահ խա
փանեցեր . զանկեալն կանգնեցեր . յարեոր
'ի մեռելոց , և զմեռեալսն յաւիտենից ընդ
քեզ յարուցեր . վասն որոյ անկանիմ ա
ռաջի քո՝ երկրպագելով անձնկալ սրբոց
գերեզմանիդ . հաւատամ 'ի ճշմարիտ
մարդեղութիդ . օրհնեմ զխաչելութիդ .
գովեմ զխոնարհութիւնդ . բարեբանեմ
զփառաւոր թաղումդ . և փառաւորեմ
զկենսատու յարութիւնդ . Արդ՝ բարե
խօսութեամբ անարատ ծնողի քո սուրբ
անձամբի և ամենայն սրբոց լուր ճայնի

պաղատանաց խնդ . և արժանաւորեա՛ զիս
 Քչմարիտ խոստովանութեամբ և փրկական
 սուրբ մարմնոյ և արեան հաղորդութիւն
 գալ առ քեզ : Յիշեա՛ տէր զամենայն
 հաւատացեալն և զայնոսիկ՝ որք յանձ
 նեցին մեզ յիշել ՚ի սուրբ Տեղիս այս .
 և ողորմեա՛ նոցա ըստ մեծի ողորմութեան
 քում , և արժանի արա՛ զամենեւեան գալ
 յերկրպագութիւն ամենասուրբ Վերեղմանի
 քո և վայելել զշնորհս սուրբ տեղեաց .
 ընդ նոսին շնորհեա՛ և ինձ անձ իմ յիսուս
 ջերմ արտասուս և սէր հոգևոր . զի ար
 ժանապէս փառս և երկրպագութիւն մա
 առցից քեզ ընդ հօր և ընդ մբ հոգւոյն
 այժմ և միշտ և յաւիտեանս ,
 ամէն :




ԵՂՕԹԻՔ

ի սուրբ պարտիզին , ուր երևեցաւ քրիստոս
 մարիամու մագդաղենացւոյն :

Մե՛ծ ես գու տէր և սքանչելի են
 գործք քո , որ արարեր զանքննինան . յարեար
 անձահրաշ զօրութեամբդ ո՛չ խախտելով
 զկնիք գերեզմանիդ . երևեցար կանանցն
 իւղաբերից , զսուգ նոցա փարատեցեր .

զտրամեալն միթարեցեր . ՚ի պարտիզին
կանգնեցեր զառ ՚ի դրախտի զկործանեալն .
յայտնելով մտրիամնու մագդաղենացւոյն՝
զարտասուս նորա սրբեցեր . առաքեցեր
զնա առ ընտելեալս քո ՚ի գալիլեայ՝ և
նորօք աւետարանեցեր զչարութիւնդ .
Արդ՝ խնդրեմ ՚ի քէն մարգասէր տէր ,
բարեխօսութիւն ծնողիդ քո և երջանիկ
սբց առ սրբելոցդ՝ երևեցն ինձ զերեսս քո .
հաստատեալ զիս ՚ի քեզ . յարո՞ զիս ՚ի մե-
ռելութենէ մեզաց , և տարգւկեալ ինձ զու-
րախութիւն անապառ , զի արժանաւորեցայց
լինիլ վառաւորիչ ամենամբ անուանդ քո ,
այժմ՝ և միշտ և յաւիտեանս ,
ամէն .



ԱՂՕԹԻՔ


Առաջի սեան՝ յորում կապեցաւ քրիստոս , որ ծ
՚ի սուրբ Յովհաննէս եկեղեցւոջ :

ԲԱԶՄԱԳՈՒԹ մարգասէր տէր , որ
զան իմոյ փրկութիւն յօժարակամ կրեցեր
զանտանելի չարչարանս , կապեցար ՚ի սեան
կապողդ երկնից , զի արձակեցես զիս ՚ի
չար կապանաց բանսարկուին . անխնայ
հարուածոց՝ գանից և ապրտակաց հաւ

36205-66



գուրծեցեր՝ փրկիչդ տիեզերաց, զի զՆ
 բաւորեալս 'ի հոգի և 'ի մարմին՝ ապաքի
 նեցես . և արդ՝ խնդրեմ 'ի քէն թագա
 ւոր անմահ, կապեա՛ զիս 'ի յաւիտեանական
 տէր քո . զի միայն զքեզ սիրեցից և քեզ
 ծառայեցից, և զամենասուրբ անուն քո
 փառաւորեցից հանապազ . և արժանացո՛
 զիս բարեխօսութեամբ անարատ ծնողիդ
 և սիրելի աշակերտին քո Յովհաննու՛ ե
 բանաւէտ տեսլեանդ . և քեզ փառք ընդ
 հօր ամենակալի և ընդ սբյ հոգւոյն Ճշմարտի
 այժմ և միշտ և յաւիտեանս ,
 ամէն ,



ԵՂՈԹԻՔ

Մտնի աղօթատեղւոյն՝ քրիստոսի 'ի ձեռն
 գետեմանի :

ՕՐՆ երկնաւորի միածին որդի յԹ
 քրիստոս , որ զկնի աւանդելոյ զխորհուրդ
 կենարար մարմնոյ և արեան քո 'ի սուրբ
 վերնատունն՝ ելեր 'ի պարտեզն գետսե
 մանի՝ 'ի խնդիր յեղեմական դրախտի կո
 բուսելոյն . աղօթեցեր մարմնով առ հայր
 վասն իմոյ փրկութեան . յանձն առեր զը
 բանաւ 'ի հրեշտակաց՝ զօրացուցիչդ երկ

նաւորաց և երկրաւորաց, կամաւ մատեն
ցոր հրէից՝ նենգութիւն անօրէն աշակերտի
յուզայի՝ զի զմատնեայս մահու և դժու
խոց ազատեսցես: Արդ՝ աղաչեմ զքեզ
անոխակալ փրկիչ՝ փրկեալ զիս ՚ի մեղաց և
յամենայն փորձութեանց, և արժանացո՞
քնդ սուրբս քո ժառանգել զերկնից ար
քայութիւնդ: զի դու ես տէր կենաց և
ստորուած ողորմութեանց՝ և քեզ փառք
և երկրագոյնութի յաւիտեանս յաւիտենից,
ամէն:




ԵՂՕԹՔ

Եւստի սուրբ Կարապետ տեղոյն քրիստոսի:

Տէր իմ յիսուս քրիստոս. որ կատա
րեցեր զամենայն մարմնաւիկ անօրէնութիւն
քո. և զնի փառաւոր յարուէգ յաւուրս
քառասուն երևելով աշակերտացդ՝ ու
սուցեր նոցա զարքայութեանն քոյ անձառ
դիտութիւնն. զորս և հանեալ ՚ի լեառձ
շիթենեաց՝ լցեր զանազան շորհօք. ետուր
նոցա առաքելական իշխանութիւն՝ քարո
զել զաւետարանն ամենայն արարածոց.
գրհնելով զնոսա առաքելցեր աշակերտել
զամ հեթանոսս, և մկրտել յանուն հօք

և որդւոյ և հոգւոյն սրբոյ, և պատուի
 րեցեր նոցա սպասել յերուսաղէմ, մինչև
 զգենուլ զգորութիւնն ՚ի բարձանց,
 Եւ ապա ինքնիշխան Թադաւոր՝
 համբարձար աստի յերկինս առ հայր,
 Արդ՝ և այժմ՝ անկեալ առաջի ոտնա
 տեղւոյդ՝ խնդրեմ ՚ի քէն բարձրեալ
 Թադաւոր՝ Թա իմ յիսուս՝ արժանացո՛ղիս
 ՚ի միւսանդամ՝ փառաւոր գալտեանդ՝
 գասակից լինիլ աջակողմեան դասուն, և
 ընդ սուրբս քո վերանալ յերկինս, և եր
 գել զերգս օրհնութեան ընդ երանելեացն
 (Յոյ. ԳԼ Է. 12). օրհնութի և փառք,
 և իմաստութի, և գոհութի, և պատիւ,
 զօրութիւն, և շնորհք տեսուն Թա մերոյ
 յաւիտեանս, ամէն.



ԱՂՕԹԻՐ

Առաջի ամնօրհնեալ տիրամայր սուրբ
 աստուածածնի գերեզմանին.

Ո՛վ մայր ողորմութեան և ծնող Թա
 բունին անարատ կոյս՝ սբ աստուածածին,
 գթա՛ յիս ՚ի մեղաւոր ծառայս քո, զի
 առ քեզ ապաւինիմ, որ յոյս ես մեղա
 ւորաց, ապաւէն կորուսելոց, կանգնիչ

գլորեւոց, և բարեխօս մ'ս աղգի մարդկան .
Արդ՝ անկանիմ առաջի քո համբուրելով
զարովը հապահ գամբարանն անծաբնակ մարմ
նոյդ . և աղաչեմ զքեզ՝ ազատեա՛ն զիս
յորոգայթէ մեղաց . և կանգնեա՛ն զկործա
նեալս 'ի խորս չարեաց . և մի մերժեր զիս
'ի քոյ բաղմնախնամ գթութենէդ . զի
գին եմ՝ սուրբ արեան միածնի քոյ և այ
խնոյ , որում երկրպագութեամբ փառք
և պատիւ այժմ և միշտ
և յաւիտեանս ,
ամէն .

ՎԵՐՋ



May

29

100

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

